

ՀԱՅԱԴԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

FEYDIT FREDERIC, *Manuel de Langue Armenienne (Armenien occidentale moderne)*. 2e édition revue et augmentée. Paris, Editions Klincksieck, 1969, 394 p.

ՖԵՅԴԻԻ ՖՐԵԴԵՐԻԿ, **Ձեռնարկ հայերեն լեզվի** (արդի արևմտահայերեն)։ Երկրորդ վերանայված և լրացված հրատարակություն, Փարիզ, 1969, 394 էջ։

Փարիզի Արևելյան լեզուների ինստիտուտի պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիի այս դիրքը բաղկացած է ներածությունից և 44 դասերից։ Ժամանակակից արևմտահայ լեզվի այս ձևերակը 1935 թ. հեղինակի հրատարակած բերականական աշխատության երկրորդ վերանայված և լրացված հրատարակությունն է։ Դիրքը նախատեսված է այլազգի ուսանողների համար։

Կարճ ժամկետում նախադասություններ հասկանալու և կազմելու զործը հեշտացնելու համար, այբուրենին հատկացված առաջին դասից հետո, բերականական բոլոր կանոնները վերադասավորված են համաձայն մի ծրագրի, որը հնարավորություն է տալիս սովորողին ըստ հնարավորին շուտ հասկանալու ուրիշի միտքը և թարգմանելու իրը։ Հայոց լեզվի ուսուցումը հեշտացնելու նպատակով դասերից հետո տրված են բառացանկեր և բաղմամբիվ վարժություններ։ Պարզ նախադասություններից հետո հետևում են ավելի բարդ նախադասություններ սովորեցնելու նպատակով ձևերակում հաջորդաբար շարադրված են էական բայի խոնարհման, զոյականների հոլովման, հոգնակիի կազմության և այլ բերականական կանոններ։

Գրքի ներածականում հեղինակը համառոտակի կանգ է առնում հայ ժողովրդի ճակատագրի բերումով առաջացած արևելահայ և արևմտահայ դրական լեզուների մասին, նշում է, որ հայերենը եղել է դարգացած հին լեզու, խոսում է միջնադարից սկսած Արևմուտքի հետ մշակութային կապերի զարգացման մասին, XIX դարում բուռն վերելք ապրող հայ լրագրության մասին և այլն։ Ֆ. Ֆեյդին հատկապես նշում է, որ V դարում ազգային այբուրենի ստեղծումից հետո, մինչև այժմ, հայերենը դարձել է ժամանակակից զարգացած լեզու և իրավացիորեն եզրակացնում։ Ժողովրդական այդ տասնեփնդ դարերի արդյունքն այն է, որ արդի հայերենը քաղաքակիրթ մի լեզու է՝ բացառիկ մի որակով։

ՆՈՐԱՅՐ Եպ. ՊՈՂԱՐՅԱՆ, Մալր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց։ Հատուր չորրորդ, Երուսաղեմ, 1969, 696 էջ, հկարագարդ։

Այս հատորում ընդգրկված են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի տարբեր դարերի 365 ձեռագրերի նկարագրությունները (ձեռագրատան 1001—1365 համարների ձեռագրերը)։ Գրքում ղեկավարված են նաև 53 բնագրեր, որոնք շահեկան են պատմական, մատենագրական կամ այլ տեսակետներից։ Հատորը պարունակում է մանրանկարչական և զարդադրական 32 նմուշներ, որոնք միագույն լինելով հանդերձ զաղափար են տալիս այդ ձեռագրերի մանրանկարչական արվեստի մասին։ Դիրքն օժտված է բնագրերի, նկարների, հատուկ անունների օժանդակ ցանկերով և ժամանակագրական ցուցակներով։ Գրքի Թ—ԻԲ էջերում տպագրված է ձեռագրերի ցուցակի այս հրատարակության բոլոր չորս հատորների համահավաք բովանդակությունը։

Ռումինիայի պատմական և բանասիրական գիտությունների ինկերության Արևելյան ուսումնասիրությունների բաժանմունքի աշխատությունների այս հատորում ևս, նախորդ հատոր-

STUDIA ET ACTA ORIENTALIA, V—VI. 1967. Bucarest, Editura Științifică, 1967, 494 p.

Արևելագիտական աշխատություններ, հատ. V—VI, 1967, Բուխարեստ, 1967, 494 էջ։

Ռումինիայի պատմական և բանասիրական գիտությունների ինկերության Արևելյան ուսումնասիրությունների բաժանմունքի աշխատու-

թյունների այս հատորում ևս, նախորդ հատոր-

ների նման, կան հայադիտական բնույթի ուսումնասիրություններ, Բաժանմունքի աշխատակից պրոֆ. Հ. Ծ. Սիրունին գրել է «Հնդկաստանի հայերի դերը հայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ» հոդվածը (էջ 297—336), որտեղ կան հետևյալ ենթադրություններ՝ Հովսեփի էմին, Շահամիր Շահամիրյան, Մադրասի խմբի գործունեությունը, Եկատերինա 11-ի ժամանակաշրջանը, Ս. Պետրբուրգի բանակցությունները, «Պարսկաստանի էքսպեդիցիայի» համար նախապատրաստությունները, Կոլոնել Թամարայի միսիան, Բոտոշանիի փաստաթուղթը, հայուսական համագործակցության նախագծեր: Հոգվածագիրը Բոտոշանիում հայտնաբերել է մի փաստաթուղթ, որը գրվել է 1786 թ. Մադրասում, Շահամիր Շահամիրյանի որդու՝ Եղիազար Շահամիրյանի կողմից, որը մահացել է իր նախագիծը կազմելուց մեկ տարի հետո, 1787 թ.: 19 կետերից բաղկացած այս փաստաթուղթը, որը կոչվում է «Հայոց ազգին և աշխարհին նախագուշակություն», արտատպված է հոգվածի վերջում՝ հայերեն բնագրին դուգահեռ ումիններեն թարգմանությամբ: Հ. Ծ. Սիրունին մանրամասն ուսումնասիրության նյութ է դարձրել այդ փաստաթուղթը և ենթադրություն է հայտնում, որ այն ուղարկված է եղել աշխարհի բոլոր հայ գաղութներին:

Հետաքրքիր է նաև Ս. Պոպեսկու-Ժուլեյի հոգվածը, որը վերնագրված է «Թրքական ժողովրդական ներկայացումների ազդեցությունը Ռումինական երկրներում»: Հեղինակը ընդարձակ տեղեկություններ է հաղորդում 19-րդ դարի վերջում Բուխարեստում բնակվող հայ վաճառականների և արհեստավորների մասին, հայազգի դերասան Հաշի Հակոբի թատերական խմբի գործունեության, դերասան Բենլյանի

խմբի՝ Կոնստանցայում ներկայացրած Զուխաճյանի «Լեպլեպիճի Հոր-հոր աղա» օպերետի մասին և այլն:

Հայադիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր է պարունակում նաև հանդուցյալ Վլադ Բընըցյանուի հոգվածը, որը կրում է «Հնդկաստանի մեծ լեզվաբան Սունիտի Կումար Չաթերճի» խորագիրը: Հնդիկ լեզվաբանը Փարիզում հետևելով Ա. Մեյերի դասընթացներին, ղրադվել է հայերեն լեզվով և հայադիտությամբ: Հետագայում ղրադվել է հայերի նախապատմության, հայ գրերի գյուտի, V դարի հայ մատենադրության, ինչպես նաև հայկական ժողովրդական բանահյուսության հարցերով: «Հայ հերոսական ներիաթներ և Սասունցի Դավիթ դուցազններգությունը» ուսումնասիրությունում նա մանրամասնորեն կանգ է առել Վահագնին, Միհրին, Անահիտին, Արտավազդին, Հայկին, Արա Գեղեցիկին և ուրիշ հերոսներին վերաբերող ավանդությունների վրա: Պրոֆ. Ս. Կ. Չաթերճին բաջ տեղյակ լինելով Մ. Աբեղյանին, Կ. Մելիք-Օհանջանյանին, Ա. Ղանալանյանին, իր ուսումնասիրության «Սասունցի Դավիթ» դիտում հանդամանորեն գրել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին արաբական տիրապետության շրջանում:

Երևանի մատենադարանի գիտական աշխատող Վ. Դրիզորյանը ստորագրել է «Մուգավիայի հայերի պատմության վերաբերյալ մի կարևոր փաստաթուղթ» հոգվածի տակ (էջ 399—403):

Այս հատորը արևելագիտական բովանդակությամբ «Ուսումնասիրություններ և հոգվածներ» բաժնից բացի պարունակում է նաև ղրախոսականների, «Գիտական կյանք», «Ակնարկներ և նմուշներ» բաժինները:

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՐԱՆ. Աշխատասիրեցին՝ Արտաշես Տեր-Խաչատուրյան, Հրանդ Գաճգրունի, Փարամազ Կ. Տոնիկյան, Բեյրութ, Կ. Տոնիկյան և ուրիշ հրատարակչառու, 1968, 924 էջ:

Բառարանը կազմողները ղրքի առաջարանում ղրում են՝ «Հիմնականորեն այս բառարանը նկատի ունի ներկա արևմտահայ աշխարհաբարը. սակայն հոն կարելի է գտնել նաև ղրարարի, միջին հայերենի և ղավառաբարբառներու այն բառերը, որոնք մուտք ղործած են մեր ներկա աշխարհաբարին մեջ և անհրաժեշտ են տվյալ ժողովուրդի մը կյանքին այլազան երեսները արտահայտելու համար»: Այնուհետև նրանք համառոտակի թվարկում են բառարանի բառերի ընտրության հետ կապված որոշ սկզբունքներ, բառերի բացատրությունների և հիմնական նշանակությունների պարզ և մատչելի սահմանումներով ու հոմանիշներով ներկայացնելու նկատա-

ռումներ, ուղղագրական նշանացման ու արդիականացման որոշ ձգտումներ: Շուրջ 35 հազար բառ պարունակող այս փոքրածավալ ղործնական բառարանը մի օգտակար աշխատություն է որտեղ ընդգրկված է արևմտահայ ղրական լեզվի հիմնական բառապաշարը:

Բառարանի վերջում գետեղված է Արտաշես Տեր-Խաչատուրյանի պատրաստած «Անձնանուններու բառարանը» (էջ 913—922): Վերջիս կազմելու համար բառարանագիրը ղիմել է Հրայրյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանին» (հինգհատորյակ) և Նյու-Յորքում հրատարակված «Վեբստերի պրակտիկ նկարագրողական բառարանին»:

ՄԻԽԻԹԱՐՅԱՆ ՍԵՐՈՎԵՆ, Ջրանսերեցով արտահայտվող հայ արվեստագետներ, Փարիզ, 1969, 458 էջ, Եկաբազար:

Այս հետաքրքիր աշխատության միջոցով հայ ընթերցող հասարակությունը հնարավորություն է ստանում ծանոթանալու ֆրանսահայ մի խումբ աչքի ընկնող գործիչների հետ:

Հատորում տեղ են գտել զրականության ու նկարչության, թատրոնի ու կինոարվեստի, դերասանության ու բեմադրության, երգի ու երաժշտության բնագավառի մի շարք հայ անվանի գեմբեր:

«Մենք փորձեցինք,— գրում է Սերովեն Միխիթարյանը իր առաջարանում,— Ֆրանսիայում զանազան արվեստների զարգացմանը մասնակցող, արդեն ճանաչված ու որոշ դիրքերի հասած, ֆրանսերենով արտահայտվող հայ արվեստագետները համախմբելով, հայտնաբերել ներառեց բերած նպաստը ֆրանսական մշակույթին և կազմել մի ընդհանուր գաղափար՝ մեր համայնքի արտադրած, հասարակական արժեք ներկայացնող անձնավորությունների հավաքական կարողությունների մասին, որոնց համապատկերը ցույց է տալիս, որ նրանք որոշ չափով կարող են նպաստել ազգայնականման մեր ճիգերին»: Գրքի ներածականում հեղինակը նշում սաև, որ «ազգայնականման հարցը առաջացրել է ինքնուրույն ազգային ներկայի հարց է», որ «անցյալում ձուլումների և այլասերումների ամենագլխավոր պատճառներից մեկը եղել է հայ պետականության վերացումը, իսկ այսօր կա և գոյություն ունի Հայաստանը իր պետականու-

թյամբ. ուր հայ ժողովուրդը աճում ու զարգանում է գիտական, ֆիզիքական և նյութական բարենպաստ պայմաններում»:

Առանձին գլուխներում ներկայացված են զերասաններ Ռոզի Վարդը, Ալիս Սափրիչը, Լուի Լիոնեն, Գրեգուար Ասլանը, զրող Վահե Քաշան, Խատերադիր Գարրիել Արութը, ծաղրանկարիչ Էդմոն Քիրազը, զրող Արթուր Աղամովը, բալետային Կարփուշա Տեր-Արամովը, զերասան Իվ Վենսանը, զրող Ռուբեն Մելիքը, զերասան Սաշա Փիթոնը, զերասան և բեմադրիչ Էդմոն Խամիլը, թատերադիր Ռեյմոն Վենսին, զերասան Միշել Արդանը, երգիչ Շարլ Ազնավուրը, լրագրող և բեմադրիչ Հանրի Վոնենոյը, զրող Արմեն Լյուբենը (Շահան Շահնուրը), զերասան Նաբսուդյանը, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շարլ Նետեյանը, զրականագետ Քրիսթիան Տետեյանը, ակադեմիկոս Հանրի Տրուայան: Գրքի երկրորդ մասում ներկայացված են ֆրանսահայ նկարիչներ Լևոն Թյուրյունճյանը, Գառլուեն, Զարեհ Մուրաֆյանը, Բյուզանդ Թոփալյանը, Ռիչար Ժեֆանյանը և Փափաղը:

Ֆրանսահայ իրականության մեջ համբավ ձևոք բերած, ծագումով հայ գործիչներին նվիրված այս աշխատությունը կարող է իբրև ատաղձ ծառայել ֆրանսահայ զաղութի պատմությունը զրողներին և հայ-ֆրանսիական մշակութային կապերը ուսումնասիրողներին:

ՏԵՐ-ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, Ծահան Ռ. Պերպերյան (1891—1956):
Կենսագրություն և մատենագիտություն, Բեյրութ, Կ. Տոնիկյան և որդի
հրատարակչատուն, 1969, 105 էջ:

Սփյուռքահայ գեղագետ ու արվեստագետ, մանկավարժ, հասարակական գործիչ Շահան Պերպերյանի մասին ամենածավալուն երկն է, որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում (էջ 7—53) տրված է Շահան Պերպերյանի աստանդական կյանքի պատմությունը, նրա մասնակցությունը զաղութահայ կյանքին: Առանձնապես ընդգծված է նրա արվեստագիտական գործունեությունը՝ խմբավարական աշխատանքը, հատկապես իր կյանքի եղիպտոսում անց

կացրած շրջանում (1924—1934 թթ.) և Երուսաղեմում ապրած տարիներին (1934—1944 թթ.):

Գրքի երկրորդ մասը Շ. Պերպերյանի տապալի աշխատությունների, թերավարտ կամ պատրաստության մեջ գտնվող գործերի, ուսումնասիրությունների, հոդվածների, զրախոսականների ու բրոնիկների մատենագիտական ցանկն է՝ ծանոթություններով և զանազան տեղեկություններով պարզարանված:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ